ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0913.02.5 «ՔՈՒՅՐԱԿԱՆ ԳՈՐԾ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 0913.02.01.5 «ԲՈՒԺՔՈՒՅՐ/ԲՈՒԺԵՂԲԱՅՐ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

5. Միջին մասնագիտական կրթության 0913.02.5 «Քույրական գործ» մասնագիտության 0913.02.01.5 «Բուժքույր/բուժեղբայր» որակավորման մասնագետի մասնագիտական գործունեության բնութագիրը տրվում է ըստ զբաղմունքների տեսակների եւ մասնագիտական պարտականությունների:

6. Միջին մասնագիտական կրթության 0913.02.5 «Քույրական գործ» մասնագիտության 0913.02.01.5

«Բուժքույր/բուժեղբայր» որակավորմամբ մասնագետն իրականացնում է հետեւյալ զբաղմունքները՝

1) ընդհանուր պրակտիկայի բուժքույր/բուժեղբայր,

2) թերապիայում քույրական գործ իրականացնող բուժքույր/բուժեղբայր,

3) մանկաբուժությունում քույրական գործ իրականացնող բուժքույր/բուժեղբայր,

4) վիրաբուժությունում քույրական գործ իրականացնող բուժքույր/բուժեղբայր,

5) մանկաբարձությունում եւ գինեկոլոգիայում քույրական գործ իրականացնող բուժքույր/բուժեղբայր,

6) վարակաբանությունում քույրական գործ իրականացնող բուժքույր/բուժեղբայր,

7) նյարդաբանությունում քույրական գործ իրականացնող բուժքույր/բուժեղբայր,

8) հոգեբուժությունում քույրական գործ իրականացնող բուժքույր/բուժեղբայր,

9) մաշկաբանությունում եւ սեռավարակ հիվանդություններում քույրական գործ իրականացնող

բուժքույր/բուժեղբայր,

10) քիթ, կոկորդ, ականջի հիվանդություններում քույրական գործ իրականացնող բուժքույր/բուժեղբայր,

11) ակնաբուժությունում քույրական գործ իրականացնող բուժքույր/բուժեղբայր,

12) գերիատրիայում քույրական գործ իրականացնող բուժքույր/բուժեղբայր,

13) վերակենդանացման եւ ինտենսիվ թերապիայում քույրական գործ իրականացնող

բուժքույր/բուժեղբայր,

14) վերականգնողական եւ ավանդական բժշկությունում քույրական գործ իրականացնող

բուժքույր/բուժեղբայր:

7. Միջին մասնագիտական կրթության 0913.02.5 «Քույրական գործ» մասնագիտության 0913.02.01.5

«Բուժքույր/բուժեղբայր» որակավորմամբ մասնագետի մասնագիտական պարտականություններն են.

1) ստացիոնարի եւ պոլիկլինիկայի պայմաններում ըստ բժշկի նշանակումների՝ տարբեր

սեռատարիքային խմբերի պացիենտների հետ ախտորոշիչ, բուժական, վերակենդանացման,

վերականգնողական, կանխարգելիչ, բուժառողջարարական, սանիտարահիգինիկ,

սանիտարալուսավորչական միջոցառումների կատարում,

2) հիվանդների խնամքի ժամանակ քույրական գործընթացի փուլերի իրականացում եւ

փաստաթղթերով հիմնավորում,

3) ստացիոնար եւ տնային պայմաններում քույրական խնամքի կազմակերպում եւ իրականացում,

4) ծանր եւ սահմանային վիճակում գտնվող հիվանդների եւ տուժածների վիճակի գնահատում եւ

առաջնային ախտանիշների ու համախտանիշների տարբերակում, անհետաձգելի իրավիճակներում նախաբժշկական օգնության ցուցաբերում,

5) կոնկրետ հիվանդի պարագայում դեղամիջոցների արդյունավետության գնահատում, դեղորայքային թունավորման ժամանակ նախաբժշկական օգնության ցուցաբերում,

6) հիվանդին լաբորատոր, ֆունկցիոնալ եւ գործիքային հետազոտություններին նախապատրաստում,

7) ֆիզիոթերապեւտիկ գործողությունների (պրոցեդուրա) հիմնական տեսակների կատարում,

հոգեթերապիայի տարրերի օգտագործում, բժշկի նշանակած սննդակարգի (դիետա) պահպանման նկատմամբ հսկողություն, բուժական գործողությունների արդյունավետության գնահատում,

8) առողջության պահպանման եւ ամրապնդման համար առանձին անհատների, ընտանիքների եւ բնակչության խմբերի կրթմանն ու ուսուցմանն ուղղված կանխարգելման համալիր ծրագրերի պլանավորում եւ գնահատում,

9) դեղամիջոցների ստացման, պահպանման եւ օգտագործման դեղագործական կարգի պահպանման նկատմամբ հսկողություն,

10) բժշկական փաստաթղթերի վարում,

11) ինֆեկցիոն հսկողության պահանջների կատարում, հիվանդների եւ բուժանձնակազմի ինֆեկցիոն անվտանգության պահպանում,

12) բնակչության, հիվանդների, տուժածների, աղետների բժշկության ծառայության բուժանձնակազմի պաշտպանությանը վերաբերող միջոցառումների անցկացում,

13) գործիքների նախապատրաստում բժշկի կողմից բարդ միջամտությունների կատարման ժամանակ,

14) հիվանդների նախապատրաստում ախտորոշիչ հետազոտությունների եւ շտապ վիրահատությունների,

15) նյութերի հավաքում, տեղափոխում եւ պահպանում մանրէաբանական հետազոտության համար,

16) քույրական միջամտությունների կատարում,

17) հիվանդությունների կանխարգելում,

18) բժշկի ախտորոշիչ եւ բուժական նշանակումների կատարում,

19) հիվանդների համալիր խնամք: